ԿԱՐԾԻՔ

Լուսինե Վասիլի Չիլինգարյանի «Ռազմական ոլորտի առաջնորդի արդյունավետ կառավարումն ապահովող սոցիալ-հոգեբանական գործոնները» վերտառությամբ ատենախոսության վերաբերյալ

Բոլոր ժամանակներում ռազմական ոլորտի առաջնորդի արդյունավետ կառավարումն ապահովող սոցիալ-հոգեբանական գործոնների բացահայտման վերաբերյալ գիտական հետազոտությունները եղել են արդիական, քան որ հետազոտական արդյունքների արդյուավետ կիրառման դեպքում այն նպաստելու է զինծառայողների մասնագիտական գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացմանը: Ընդ որում, հեղինակը ևս նշում է, որ ժամանակակից աշխարհաքաղաքական և անվտանգային սպառնալիքների սրընթաց փոփոխությունների պայմաններում արդիական է դառնում ռազմական ոլորտի առաջնորդի արդյունավետ կառավարման հիմնախնդրի ուսումնասիրությունը, քանի որ Զինված ուժերում կառավարման արդյունավետությունը որոշվում է ոչ միայն ժամանակակից սպառազինության և տեխնիկայի (ՍՌՏ-ի) առկայությամբ, այլև ստորաբաժանումներում հրամանատար-առաջնորդի և ենթականների միջև հմուտ փոխգործությամբ ու անձնակազմի կայուն բարոյահոգեբանական վիճակի ապահովմամբ:

Ներկայումս «Հայաստանի Հանրապետության բանակի կերպափոխման հայեցակարգում» սահմանվում են խիստ չափանիշներ, ուստի ռազմական ոլորտի առաջնորդի անձնային, մասնագիտական կոմպետենտության ու սոցիալ-հոգեբանական այլ գործոնների բացահայտումը անհրաժեշտություն է, որը հնարավորություն է ստեղծում ռազմական ոլորտում հոգեբանական գիտելիքների արդյունավետ կիրառման շնորհիվ արդյունավետորեն օգտագործելու մարդկային ռեսուրսները:

Ատենախոսության հետազոտությունները հիմնվում են՝ Լ. Վոնգի, Պ. Բլիզի, Դ. Մակ Գուրգի, Մ. Մետյուսի, Ջ. Էյդի, Դ. Գոլմանի, Ռ. Հոգանի, Բ. Բասսի, Հ. Մինցբերգի, Գ. Քլեյնի, Լ. Ջեքսոնի, Տ. Դևենպորտի, Ա. Կարայանիի և այլ հեղինակների գիտական մշակումների վրա: Այդ մշակումները տեսական բազա են ստեղծում փորձարարական հետազոտությունների իրականացման համար:

Ընդ որում, ատենախոսը հետազոտությունների ժամանակ ընտրել է բավական հետաքրքիր հետազոտական գործիքակազմ՝ համակարգային, հոգեախտորոշիչ, տվյալների հավաքման մեթոդներ: Կարծում ենք, որ ընտրված գործիքակազմը հնարավորություն է տալիս հետազոտությամբ ստացված փորձարարական տվյալները համադրել տեսական մասնագիտական գրականության վերլուծության հետ, որը հետազոտական արդյունքների ճշգրիտ վերլուծության և եզրակացության առաջնային նախապայմաններից է:

Առաջին գլխում ներկայացվում են կառավարման տարբեր համակարգերում առաջնորդման հիմնախնդիրները, մասնավորապես՝ ներկայացնելով առաջնորդի իմացական կարողությունները, հաղորդակցային ու գործառնական որակները, ռազմական առաջնորդության հոգեբանությունը, ռազմավարական հարմարվողականությունը, հոգեբանական հստակությունը. ապրումակցման և հուզական բանականության դերը: Օրինակ՝ Լ. Չիլինգարյանը նշում է, որ դասական և հոգեբանական մոտեցումների սինթեզի միջոցով առաջնորդը դառնում է մշակույթ ձևավորող, համախմբող, վերափոխելով արժեքային դաշտը, անցնելով Է. Շեյնի երեք մակարդակներով՝ արտաքին վարքից մինչև ինքնաբերաբար ընդունված համոզմունքներն ու ընկալումները, որոնք ձևավորում են մարդկանց վարքագիծն ու մտածելակերպը՝ գործելով լուռ, բայց վճռականորեն՝ ազդելով խմբի գործողությունների, որոշումների վրա:

Երկրորդ գլխում հանգամանորեն վերլուծվում են ռազմական համակարգերում առաջնորդության կառուցվածքը և ֆունկցիոնալ բնութագրերը (Ա. Ֆայոլի, Ա. Ուրբանովիչ, Լ. Վոնգ, Պ. Սուինիի, Ռ. Թեյլորի և ուրիշներ), առաջնորդ–ենթակա

փոխազդեցությունը (Ջ. Բրնսի, Գ. Յուկլի և ուրիշներ), ՀՀ-ում հրամանատարական առաջնորդության ռազմամշակութային գործոնները, ինչպես նաև առաջնորդության ինտուիտիվ բաղադրիչը, ռազմական առաջնորդության մեջ արհեստական բանականությունը և այլ հիմնահարցեր:

Երրորդ գլուխը նվիրված է փորձարարական հետազոտությանը, որտեղ հիմնավորվում է կիրառված մեթոդները և հետազոտության անցկացման ընդհանուր սկզբունքները: Պետք է նկատի ունենալ նաև, որ հետազոտության առաջադրված նպատակը, խնդիրները և ընտրված հետազոտության մեթոդները և մեթոդաբանությունը հեղինակին հնարավորություն են ստեղծել ստացված հետազոտական արդյունքների հիման վրա բացահայտելու ռազմական առաջնորդի հոգեբանական հատկությունների, մասնագիտական գիտելիքների և բարոյական կողմնորոշումների, ինչպես նաև գործառութային պարտականությունների, ռազմամշակութային և սոցիալ-հոգեբանական այլ առանձնահատկությունների ու ճգնաժամային իրավիճակներում ենթակաների սպասումների փոխազդեցություն-ները:

Ինչպես տեսնում ենք կատարվել է բավական մեծ ծավալի որակյալ հետազոտական աշխատանք, սակայն ատենախոսության մեջ տեղ են գտել որոշ վրիպակներ, մասնավորապես՝

- Առկա են տեխնիկական և խմբագրական որոշ բացթողումներ, օրինակ՝ հեղինակը գրում է «տվյալների հավաքագրում», դրա փոխարեն պետք է գրվեր «տվյալների հավաքում», քանի որ հավաքագրել կարելի է մարդկանց: Մեկ այլ տեղ պետք էր խմբագրել «Արդյունքում, արդյունքների մեկնաբանությունները... (156էջ)» արտահայտությունը, 5-րդ(103էջ) և 9-րդ (135էջ) գծապատկերները կարելի էր ավելի հասկանալի կազմել և այլն:
- Փորձարարական հետազոտության կատարվել է ՀՀ պետական կառավարման համակարգի քաղաքացիական պաշտոնյաների և ՀՀ ԶՈՒ-ի ավագ սպայական-հրամանատարական կազմի շրջանում: Երկու

խմբերի համար կիրառվել են միևնույն հարցաշարերը՝ ապահովելով չափման համարժեքություն: Բայց արդյոք էականորեն տարբերվող մասնագիտական գործունեության բնույթը և պարտականությունները թույլ են տալիս նման համեմատական վերլուծություն կատարելու:

- Կարծում ենք՝ աշխատանքը կշահեր, եթե ռազմական ոլորտի առաջնորդի արդյունավետ կառավարումն ապահովող սոցիալ-հոգեբանական գործոնների բացահայտման համար հեղինակը համեմատական վերլուծություն կատարեր նաև ավագ ու կրտսեր հրամանատարական կազմերի միջև, որը հնարավորություն կտար պարզելու արդյունավետ կառավարման սոցիալ-հոգեբանական որոշակի նախադրյալներ և օրինաչափություններ:

Միևնույն ժամանակ նշենք, որ վերոնշյալ դիտարկումները չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը:

Եզրակացություն

Լուսինե Վասիլի Չիլինգարյանի «Ռազմական ոլորտի առաջնորդի արդյունավետ կառավարումն ապահովող սոցիալ-հոգեբանական գործոնները» վերտառությամբ ատենախոսությունը ավարտուն աշխատանք է, ունի տեսագործնական նշնակություն և հրապարակված գիտական հոդվածները արտացոլում են ատենախոսության բովանդակությունը: Այն համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորման 7-րդ կետի պահանջներին և ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» թվանիշին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
հոգեբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ Զ. Ասատրյան

Հոգեբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ Ս. Զ. Ասատրյանի ստորագրությունը հաստատում եմ Խ. Աբովյանի անվան
ՀՊՄՀ-ի գիտքարտուղար Հ. Թադևոսյանը

28.08.2026թ.